Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ** **(6ԷԻԿ001)**
ECTS կրեդիտ	1 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Գևորգյան Աշոտ, փ. գ. թ., դոցենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել փիլիսոփայական մտքի զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները, • պարզաբանել փիլիսոփայության հիմնական բաժիններն ու հիմնախնդիրները, • բացատրել ճանաչողության հնարավորությունը, գիտական գիտելիքի հիմնավորումը և մեթոդաբանությունը, • քննարկել բարոյական վարքագիծը և կանոնները, մարդու էությունը, • մեկնաբանել կյանքի իմաստը, ազատությունը, օտարումը և այլ հիմնախնդիրներ, • ներկայացնել հիմնավորման փաստարկներ ու հակափաստարկներ: *(կարողություններ)* • կատարել եզրահանգումներ տեսությունների լավ կամ վատ աշխատանքի վերաբերյալ, • համադրել տեսակետների համոզիչ, հիմնավորված և արդյունավետ կողմերը, • առաջադրել հիմնախնդիրներ և ձևակերպել դրանցից բխող համապատասխան հարցեր, • բացահայտել տարբեր տեսությունների խոցելի տեղերը, այսինքն՝ հակափաստարկները:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Փիլիսոփայական պատմական դարաշրջանները և դրանց բնութագրերը: Փիլիսոփայություն և աշխարհայացք: • Գոյաբանության ընդհանուր հիմնահարցերը: • Շարժման, տարածության, ժամանակի, պատճառականության, օրենքի և օրինաչափության հարցադրումները:

	• Հոգևորի հիմնահարցը: • Լեզու և մտածողություն: • Ճանաչողության հնարավորության հիմնահարցը: • Զգայական իմացություն, ձևերը: Ռացիոնալ իմացություն, ձևերը: • Ճշմարտության հիմնահարցը փիլիսոփայության մեջ: • Առօրյա և գիտական գիտելիք: Գիտական իմացության փորձնական և տեսական մակարդակները, մեթոդները: • «Փիլիսոփայական մարդաբանությունը» փիլիսոփայական գիտելիքի կառուցվածքում: • Մարդը որպես գիտական և փիլիսոփայական իմացության առարկա: • Անձի սոցիալականացումը: • Բնությունը և հասարակությունը: Հասարակությունն իբրև համակարգ: Անհատը և հասարակությունը: Հասարակական ինստիտուտներ: • Ժողովրդավարության ժամանակակից ըմբռնումները: Քաղաքացիական հասարակություն: • Մշակույթի փիլիսոփայական ըմբռնումը: Մշակույթ և քաղաքակրթություն: Քաղաքակրթությունների ապագայի հիմնախնդիրները:
Դասընթացի գրականության ցանկ	• Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Նոյյան Տապան հրատ., 2004թ., 220 էջ, ISBN 99930-51-93-4: • Շաքարյան Հ. Փիլիսոփայություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, Երևանի համալս. Հրատ., 2005թ., 212 էջ, ISBN 5-0884-0638-2: • Հակոբյան Ս. Փիլիսոփայության տեսություն (փիլիսոփայության դասընթաց բուհերի ուսանողների համար), Երևան, ԱՀԱ Պոլիգրաֆ հրատ., 2009թ., 472 էջ, ISBN 978-99930-4-924-1: • Կանկե Վ. Փիլիսոփայություն, Երևան, Զանգակ-97 հրատարակչություն, 2001թ., 304 էջ, ISBN 99930-2-247-0: • Զաքարյան Ս. Փիլիսոփայության պատմություն, Երևան, Նոյյան Տապան հրատ., 2007թ., 360 էջ, ISBN 978-99941-44-62-4:

ԷԻԿ ամբիոնի վարիչի ժ/պ Տ.Վ. Եղոյան